

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՆՄԱՆ ԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՀՀ ՆԱԽԱԳԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ
ՎՐԱ 2008թ. ՀՀ ՆԱԽԱԳԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀՀ ՆԱԽԱԳԱՆԻ ԹԵԿ-
ՆԱԾՈՒ ՀԱՄԱՐ Առաջաձգած ԽՈՉՀՆԴՈՏՆԵՐՆ ԱՆԴԱՅԹԱՐԵԼԻ ճԱՆԱ-
ՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ.

Քաղ. Երեւան

11 փետրվարի 2008թ.

Նայասրանի Հանրապետության սահմանադրական դարարանը՝ կազմով.
Գ. Հարությունյանի (նախագահող), Ա. Բալայանի, Ռ. Դանիելյանի, Ֆ. Թոհյանի,
Վ. Ռովհյանիսյանի, Զ. Ղուկասյանի, Ռ. Նազարյանի (գելուցող), Ո. Պապյանի,
Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչներ Ռուբեն Թորոսյանի, Արդակ Զեյնալյանի, Ռոբերտ
Սահնոյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 4-րդ կետի, 101 հոդվածի 9-րդ
կետի, «Սահմանադրական դարարանի մասին» ՀՀ օրենքի 44 և 75 հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «ՀՀ Նախագահի թեկնածու
Լեւոն Տեր-Պետրոսյանի դիմումի հիման վրա՝ 2008թ. ՀՀ Նախագահի ընդունած
ներում ՀՀ Նախագահի թեկնածուի համար առաջացած խոշնողներն անհաղ-
թահարելի ճանաչելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության արդիքը ՀՀ Նախագահի թեկնածուի 07.02.2008թ. դիմումն է
ՀՀ սահմանադրական դարարան:

Լսելով գործով գելուցողի հաղորդումը, դիմողի ներկայացուցիչների բացա-
փրությունները, հետազոտելով գործում առկա փաստաթղթերը, Նայասրանի Հանրա-
պետության սահմանադրական դարարանը **ՊԱՐՁԵՑ**.

1. Դիմող կողմը գրնում է, որ «2008թ. ՌՌ Նախագահի ընդունություններում ՌՌ Նախագահի թեկնածու Լեռն Տեր-Պետրոսյանից անկախ պարճառներով, արդեն իսկ, առաջացած խոչընդուներն անհնարին են դարձնում նրա հետագա մասնակցությունը ՌՌ ընդունությամբ սահմանված ընդունությամբ սահմանված գործընթացներին»: Որպես պարճառ, մասնավորապես, ներկայացվում է, որ «Հանրային հեռուստառադիոլունկերությունը, «Հ1» հեռուստաալնկերության «Հայլուր» ծրագրի միջոցով, ՌՌ օրենսդրության (Հնդկական օրենսգործի 18-րդ, 20-րդ և 22-րդ, ինչպես նաև, «Հեռուստաալնկերության եւ ռադիոյի մասին» օրենքի 11-րդ և 28-րդ հոդվածներ) պահանջների կոպիտ խախումներով, երեք ամիս շարունակ առ այսօր, հակաքարոզական զանգվածային հաղորդումներ է հեռարձակել ՌՌ Առաջին Նախագահ, ՌՌ Նախագահի առաջադրված եւ գրանցված թեկնածու Լեռն Տեր-Պետրոսյանի նկադիմամբ»:

Դիմողը մի շարք այլ փաստարկների հետ մեկտեղ, նշում է նաև, որ «Հանրային հեռուստաալնկերությամբ նախընդունական քարոզության համար թեկնածուներին պրամադրված եւ հեռուստաալնկերության համար շաբ անհարմար ժամանակը, որեւէ հնարավորություն չի փալիս անգամ մեղմացնել «Հայլուր»-ի հակաքարոզությունը»: Վկայակոչելով նախընդունական քարոզության ընթացքում թեկնածուի վսփահված անձանց կողմից ձեռնարկված առանձին քայլերը, շեշտվում է, որ «ՌՌ Նախագահի թեկնածու Լեռն Տեր-Պետրոսյանի նախընդունական շփաքը ձեռնարկել է ՌՌ օրենսդրությամբ սահմանված բոլոր հնարավոր միջոցները՝ կանխելու Նախագահի թեկնածուի նկադմամբ իրականացվող օրինախախտումները կամ վերացնելու դրանց հետեւանքները, սակայն այդ նախաձեռնությունները որեւէ դրական արդյունքի չեն բերել»:

Դիմողի կողմից որպես խոչընդունություն է դիմում այն, որ «Մեր երկրի ընդունություններում առաջին անգամ թեկնածուներից մեկը հայտնվել է այնպիսի իրավիճակում, որ իրենից անկախ պարճառներով չի կարողանում մյուս թեկնածուների հետ հավաար պայմաններով նախընդունական քարոզություն իրականացնել, այն է՝ հաղթահարել իր նկադմամբ կիրառված նախադեպը չունեցող պետական հակաքարոզության հետեւանքները եւ մասնակցել ՌՌ ընդունական օրենսդրությամբ սահմանված ընդունությամբ սահմանված գործընթացներին»:

Դիմողը խնդրում է սահմանադրական դավարանին՝ «2008թ. ՌՌ Նախագահի ընդունություններում ՌՌ Նախագահի թեկնածու Լեռն Տեր-Պետրոսյանի համար առաջացած խոչընդուները ճանաչել անհաղթահարելի»:

Դիմումին կից սահմանադրական դադարան են ներկայացվել դիմողի փաստարկներին առնչվող նյութեր:

2. Սահմանադրական դադարանն արձանագրում է, որ «Հանրապետության Նախագահի թեկնածուներից մեկի համար անհաղթահարելի խոչընդուներ առաջանալու» դրույթը նախադատված է ՀՀ Սահմանադրության 52 հոդվածում, համաձայն որի՝ Հանրապետության Նախագահի ընդունությունը հետաձգելու եւ նոր ընդունություն նշանակելու երկու հնարավոր դեպք է նախադատված: Նախ՝ խոչընդունի բնույթի գնահապետական արդյունքում, երբ Հանրապետության Նախագահի թեկնածուներից մեկի համար անհաղթահարելի խոչընդուներ են առաջացել ու դրանք չեն վերացել, երկրորդ՝ իրավունքի ուժով՝ մինչեւ քվեարկության օրը թեկնածուներից մեկի մահվան դեպքում: Ընդ որում, ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ ՀՀ Նախագահի թեկնածուներից մեկի համար առաջացած խոչընդունի բնույթի գնահապետմը՝ դրա անհաղթահարելի ճանաչման կամ չճանաչման առումով, վերապահված է սահմանադրական դադարանի իրավասությանը:

Սահմանադրության 52 եւ 100 (կեպ 4) հոդվածների պահանջներից ելնելով «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 75 հոդվածի 5-րդ մասը սահմանել է. «Սահմանադրական դադարանը կարող է անհաղթահարելի ճանաչել այն խոչընդուները, որոնք արդեն իսկ առաջացել են եւ դժվար թեկնածուից անկախ պարագաներով անհնարին են դարձնում նրա հետագա մասնակցությունն ընդունական գործընթացին անձամբ նրա հետագա մասնակցության անհնարինություն»:

3. Անդրադառնալով «Հանրապետության Նախագահի թեկնածուներից մեկի համար առաջացած անհաղթահարելի խոչընդունի» դրույթի սահմանադրահիրավական բովանդակությանը, սահմանադրական դադարանը նշում է, որ այդ դրույթի իրավական նախադեպն սկզբնավորվել է ֆրանսիական սահմանադրահիրավական պրակտիկայում, համաձայն որի՝ «անհաղթահարելի խոչընդունի» մեկնաբանվում է որպես Նախագահի թեկնածուներից մեկի կոնկրետ վիճակով պայմանավորված ընդունական գործընթացին անձամբ նրա հետագա մասնակցության անհնարինություն:

Այս ինսպիրուվով կիրառվում է բացառապես Նախագահի թեկնածուների նկարմամբ՝ նկարի ունենալով, որ նախագահական նոր ընդունությունների անհրաժեշտությունը պայմանավորվում է ոչ թե ընդունակայքարի վիճակույց խնդիրներով, այլ վիճակի անհաղթահարելիությամբ՝ թեկնածուի այնպիսի վիճակով,

որի պարճառով վերջինս անկարող է մասնակցել ընդրական հետազագործությանը:

Սահմանադրական դադարանը գրնում է, որ ընդրական գործընթացում փեղ գրած հնարավոր օրինախախորումների ու դրանցով պայմանավորված վիճահարույց խնդիրների լուծման համար օրենքով նախադեսում են վերջիններիս բացահայտման, գնահապման ու վերացման կոնկրետ ընթացակարգեր՝ հսկակեցնելով ժամկետները եւ փարբեր իրավասությեկան լիազորությունները: ՀՀ Սահմանադրության 52 հոդվածի, 100 հոդվածի 4-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 75 հոդվածի իրավակարգավորման առարկայի շրջանակներում «Նախագահի թեկնածուի համար առաջացած անհաղթահարելի խոչընդող» դրույթի սահմանադրախրավական բովանդակությունը հանգում է այլ բանի: Այն ենթադրում է, որ Հանրապետության Նախագահի թեկնածու գրանցվելու պահից մինչեւ Հանրապետության Նախագահի ընդրության օրվան նախորդող ուժերորդ օրը փետող ժամանակահարվածում Հանրապետության Նախագահի թեկնածուի կամքից անկախ նրա հետ կապված այնպիսի վիճակ է առաջացել, որն այդ ժամանակահարվածում օբյեկտիվորեն անհնարին է հաղթահարել, եւ որը գործնականում նրան գրկել է ընդրական գործընթացին հետազագործությունից:

4. Դիմողը հիմնականում փասփում է, որ թեկնածուներից մեկը հայրնվել է այնպիսի իրավիճակում, որ «...իրենից անկախ պարճառներով չի կարողանում մյուս թեկնածուների հետ հավասար պայմաններով նախընդրական քարոզություն իրականացնել», նկատի ունենալով, որ Հանրային հեռուստառադիտունը կերպությունը, «Հ1» հեռուստաընկերության «Հայլուր» ծրագրի միջոցով, ՀՀ օրենսդրության պահանջների կոպիկ խախորումներով շարունակաբար հակաքարոզչական զանգվածային հաղորդումներ է հեռարձակել իր նկարմամբ:

Սահմանադրական դադարանն արձանագրում է, որ ՀՀ ընդրական օրենսգրքի 18 հոդվածի 1-ին մասի համաձայն պետությունն է ապահովում քաղաքացիների նախընդրական քարոզության ազատ իրականացումը: Օրենքի պահանջն է նաև, որ նախընդրական քարոզությունն իրականացվում է հավասար հիմունքներով: Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ զանգվածային լրատվության միջոցներից օգբվելու համար թեկնածուներին երաշխավորվում են հավասար պայմաններ՝ եթերաժամանակ կամ ծավալ, սակագին եւ այլն:

Միաժամանակ, ՀՀ ընդունված օրենսգրքի 20 հոդվածը սահմանում է, որ Հանրային հեռուստաընկերությունը և հանրային ռադիոն պարտավոր են հավասար պայմաններ ապահովել ընդունված օրենսգրքուն մասնակցող բոլոր թեկնածուների համար: Հանրային հեռուստաընկերությամբ եւ հանրային ռադիոյով հեռարձակվող լրաբանական հաղորդումներում թեկնածուների կողմից իրականացվող նախընդունված քարոզարշավի վերաբերյալ պետք է ներկայացվի անկողմնակալ եւ գնահատականներից զերծ փեղեկարգություն՝ ապահովելով արդար ու հավասար պայմանների պահպանումը: Դրա ապահովմանն առնչվող մի շարք լիազորություններ նախադրեսված են նաև «Տեռուստագրեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով:

ՀՀ ընդունված օրենսգրքը սահմանել է նաև նախընդունված քարոզության նկարմամբ վերահսկողության կարգը (հոդվ. 20, մաս 9), համաձայն որի. «Տեռուստագրեսությունների և ռադիոընկերությունների կողմից նախընդունված քարոզության սահմանված կարգի կարգման նկարմամբ վերահսկողությունն իրականացնում է Տեռուստագրեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը, որը նախընդունված քարոզության սահմանված կարգի խախուսումներ հայդրաբերելու դեպքում իրավասու է դիմելու դադարան: Կենդանական ընդունված հանձնաժողովն իրավասու է խախուսումների վերաբերյալ կարծիք ներկայացնելու դադարան»: Բացի դրանից, ՀՀ ընդունված օրենսգրքի 41 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը սահմանում է, որ կենդանական ընդունված հանձնաժողովը «վերահսկում է զանգվածային լրաբանության միջոցների կողմից քարոզության համար սահմանված հավասար հնարավորությունների ապահովումը»: Միաժամանակ, համաձայն Տայապահնի Հանրապետության վարչական դադարանության օրենսգրքի 25-րդ գլուխ դրույթների՝ ընդունված իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի վարույթն իրականացնում է ՀՀ վարչական դադարանը՝ հիշյալ օրենսգրքի 143-150 հոդվածներով սահմանված կարգով:

5. Սույն գործը դադարանության նախապարհապելու ընթացքում ՀՀ վարչական դադարանից, ՀՀ կենդանական ընդունված հանձնաժողովից եւ Տեռուստագրեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովից պահանջված փեղեկանքները վկայում են, որ դիմողի վսփահված անձը սահմանադրական դադարան դիմելու օրը՝ 2008թ. փետրվարի 7-ին, դիմումում շարադրված փասդերով հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դադարան: Տեռուստագրեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովն իր 07.02.2008թ. թիվ 01-17 գրությամբ սահմանադրական դադարանին փեղեկացրել է, որ «07.02.2008թ. հանձնաժողովը

սպացել է ՀՀ Նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի վսրահված անձ Արքակ Զեյնալյանի կողմից ՀՀ վարչական դատարան ներկայացված գործողության կարարման հայց նախընդրական քարոզության սահմանված կարգի նկարմամբ հսկողություն իրականացնելու մասին»: Նույն գրությամբ փեղեկացվում է նաև, որ 06.02.2008թ. ՀՀ Նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի նախընդրական շփարի կողմից նույնպես սպացվել է դիմում-առաջարկություն, որը վերցվել է ուսումնասիրության:

ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված փաստարկների շրջանակ-ներում 2008թ. փեղրվարի 6-ին ՀՀ Նախագահի թեկնածուի վսրահված անձի կողմից դիմում-առաջարկություն է ներկայացվել նաև ՀՀ կենդրունական ընդրական հանձնաժողով:

Սահմանադրական դատարանը գրնում է, որ ՀՀ Նախագահի թեկնածուի վսրահված անձանց այդ գործողություններն իրավաչափ են, բխում են օրենքի վերոհիշյալ պահանջներից, եւ ՀՀ կենդրունական ընդրական հանձնաժողովի, Շեռուսպարեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի, ինչպես նաև ՀՀ վարչական դատարանի խնդիրն է իրենց իրավասության շրջանակներում, օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում ապահովել զանգվածային լրատվամիջոցների կողմից ՀՀ ընդրական օրենսգրքի եւ «Շեռուսպարեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի պահանջների հսկակ կարարումը: Այս հարցում ցանկացած ձեւական մոդեռում անվսրահություն կարող է առաջացնել ընդրական գործընթացի նկարմամբ:

Միաժամանակ, նախընդրական քարոզության գործընթացի շրջանակներում ՀՀ Նախագահի թեկնածուի վսրահված անձանց վերոնշյալ գործողությունները, ինչպես նաև թեկնածուի կողմից նախընդրական քարոզության շարունակման փասդը վկայում են, որ ոչ թե առկա են անհաղթահարելի խոշընդունել, այլ այդ գործընթացի շրջանակներում առաջ է քաշվում նախընդրական քարոզության օրինականության ապահովման հետ կապված վեճ, որն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ներկայացվել է ընդրությունների այս փուլում դրանց գնահարման եւ լուծման իրավասությունն ունեցող վերոհիշյալ մարմիններին:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև ընդգծել, որ ՀՀ Սահմանադրության եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի հիշյալ հոդվածներում խոսքը վերաբերում է ՀՀ Նախագահի թեկնածու իրավասությեկարին: Այսինքն՝ այն անձին, ով օրենքով սահմանված կարգով առաջարկվել, գրանցվել եւ ձեռք է բերել ՀՀ Նախագահի թեկնածուի իրավական կարգավիճակ: Այս առումով,

դիմողի բերած այն փաստարկները, որոնք առնչվում են ՀՀ Նախագահի թեկնածուի գրանցմանը նախորդող գործընթացներին, անմիջականորեն չեն վերաբերում սույն գործով սահմանադրական դադարանին ներկայացված խնդրանքին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 52 հոդվածով, 100 հոդվածի 4-րդ կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դադարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 75 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դադարանը **Ո Ր Ո Շ Ե Յ .**

1. Դիմողի ներկայացրած փաստարկները՝ ՀՀ Սահմանադրության 52 հոդվածի եւ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 75 հոդվածի իրավակարգավորման առարկայի շրջանակներում, 2008թ. ՀՀ Նախագահի ընդունություններում ՀՀ Նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի համար չեն կարող համարվել որպես անհաղթահարելի խոչընդունելի:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ